



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱՔ ԵՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՅԱՐԿԻՆ ՏԱԿ

Շաբաթ, 4 Հոկտեմբերին, կ.ե. ժամը 4-ին, Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տեր Ղազարեան» սրահին մէջ հաւաք մը տեղի պիտի ունենայ հովանաւորութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի: Հաւաքը կազմակերպուած է Թեմիս երիտասարդական Միութեանց կողմէ:

Յիշեցնենք, որ անցեալ Օգոստոսի կեսերուն, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի տնօրինումով, եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երիտասարդական Բաժանմունքի կազմակերպութեամբ, 13-20 Օգոստոսին, Կաթողիկոսարանի Դպրեվանքին յարկին տակ, Պիքֆայա, տեղի ունեցաւ Միջ-Թեմական երիտասարդական Համագումար մը:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հօր տնօրինումով, մեր Թեմէն սոյն համագումարին մասնակցեցան 11 երիտասարդներ, գլխաւորութեամբ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիկեանի:

Յառաջիկայ հանդիպումին, համագումարին մասնակցող պատուիրակները պիտի զեկուցեն համագումարին մասին ու պիտի պատասխանեն ներկայ երիտասարդներու հարցումներուն:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 6-ին, Ազգային Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատրան մէջ Ս. Պատարագ պիտի մատուցուի հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր: Ս. Պատարագը պիտի մատուցանէ եւ պիտի քարոզէ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիկեան. երգեցողութիւնը պիտի կատարեն երիտասարդները:

YOUTH GATHERING AND DIVINE LITURGY AT THE PRELACY

Under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, a youth gathering has been organized at the Prelacy “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall on Saturday, October 4th, at 4:00 p.m. During the gathering, the 11 youth who participated in the Youth Conference at the Catholicosate of Cilicia last month will report on their experiences and thoughts on the conference.

At 6:00 p.m., the youth will participate in Divine Liturgy at the “St. Dertad and St. Ashkhen” Chapel. Very Rev. Fr. Barthev Gulumian will celebrate Divine Liturgy and deliver the sermon.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ
ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԻՆ**

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հայրը, Կիրակի, 28 Սեպտեմբերին, կեսօրէ ետք, ներկայ պիտի ըլլայ Հայ Կրթական Հիմնարկութեան տարեկան ձեռնարկին, որ տեղի պիտի ունենայ Sheraton Universal Roof Garden պանդոկին մէջ եւ պիտի փոխանցէ իր օրհնութեան խօսքը:

Հիմնարկութիւնը պիտի պատուէ իրաւաբան Վարդգես Եղիայեանը, իբրեւ 2008 տարուան մարդը՝ ի նպաստ Հայ Դատին իր բեղում գործունէութեան եւ ներդրումին համար:

PRELATE TO ATTEND AEF CELEBRATION LUNCHEON

On the afternoon of Sunday, September 28th, the celebration luncheon of the Armenian Educational Foundation will take place at the Roof Garden of the Sheraton Universal Hotel, during which Mr. Vartkes Yeghiayan will be honored with the AEF Lifetime Achievement Award.

The Prelate will attend and deliver the invocation.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ Հ.Մ.Ը.Մ.Ի
«ԱՐԱՐԱՏ» ՄԱՍՆԱԾԻՐԻ 30-ԱՄԵԱԿԻ ՁԵՌՆԱՐԿԻՆ**

Հ.Մ.Ը.Մ.-ի Կլենտէյլի «Արարատ» մասնաճիւղը իր գործունէութեան 30-ամեակը պիտի տօնէ Կիրակի, 28 Սեպտեմբերին, Երեկոյեան Ժամը 6-ին, Hollywood Hills Forest Lawn-ի Hall of Liberty սրահին մէջ:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ տօնակատարութեան եւ պիտի փոխանցէ իր օրհնութիւնները:


**PRELATE TO ATTEND HOMENETMEN “ARARAT” CHAPTER 30TH
ANNIVERSARY CELEBRATION**

Homenetmen "Ararat" Chapter of Glendale will celebrate its 30th anniversary on the evening of Sunday, September 28th, at the Hall of Liberty of Hollywood Hills Forest Lawn.

The Prelate will be in attendance and will deliver the invocation.

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՏԱՐՈՒԱՆ ՆՈՒԻՐՈՒԾ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Արեւմտեան Թեմի Ազգային Առաջնորդարանին կողմէ, Քրիստոնեական Դաստիարակութեան Տարուան նուիրուած ձեռնարկներու ծիրին մէջ, Երեքշաբթի, 23 Սեպտեմբերի երեկոյեան, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ դասախօսական ձեռնարկ մը, հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի: Դասախօսն էր Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան: Ներկայ էին հոգեւորականաց դասու անդամներ, Ազգ. Վարչութեան ներկայացուցիչներ, Ս. Աստուածածին եկեղեցւոյ ժողովականութեան անդամներ եւ բազմաթիւ հաւատացեալներ:



Հանդիսավարը՝ Տիկին Թամար Թիւֆէնքեան-Սերայտարեան, հակիրճ կերպով անդրադարձաւ այն իրողութեան, որ այս ու նմանօրինակ դասախօսական ձեռնարկներ գործնական ընդառաջում են Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի այն պատգամին, որ 2008 տարին հռչակած էր Քրիստոնեական Դաստիարակութեան Տարի:

Հայր Միւռն հանգամանօրէն անդրադարձաւ այն հիմունքներուն, որոնք կը կազմեն եկեղեցւոյ առաքելութեան գլխաւոր գիծերը, նշելով, որ քրիստոնեական դաստիարակութիւնը կը հանդիսանայ մեր եկեղեցւոյ առաքելութեան սիրտը: Ան նշեց, որ ծնողներ, մանուկի մը ծնունդէն առաջ իսկ, նախանձախնդիր հոգածութիւն կը ցուցաբերեն անոր անթերի կազմաւորման ու աշխարհ գալուն ի խնդիր. անոնք պարտին նաեւ նոյնպիսի հոգածութեամբ վերաբերիլ նորածինին ու հասակ առնող մանուկին հետ: Գերապատիւ Հայր Սուրբը իր դասախօսութիւնը եզրափակեց յիշեցնելով, որ քրիստոնեայ առաջին ընտանիքը կը կազմէին Քրիստոսի երկրաւոր ծնողները՝ Հայր Յովսէփ ու Մարիամ Աստուածածին, թելադրելով, որ իւրաքանչիւր քրիստոնեայ ընտանիք իբրեւ տիպար օրինակ ընդունի Յիսուս Մանուկի ընտանիքը:

Դասախօսութեան կողքին, բաժին, որուն մասնակցութիւն Վարժարանէն աշակերտուհիներ:



յայտագիրը ունէր գեղարուեստական բերին Ազգ. Ալեք Փիլիպոս Երկրորդ.

Դասախօսական երեկոյին եզրափակիչ խօսքը արտասանեց ու իր պատգամը ուղղեց Առաջնորդ Սրբազանը: Ան գնահատանքով արտայայտուեցաւ գեղարուեստական բաժինը ներկայացնող աշակերտներուն, հանդիսավարին ու դասախօս հայր սուրբին մասին, նշելով, ապա վեր առաւ քրիստոնէական դաստիարակութեան ու քրիստոնավայել կեանքի

իրայատկութիւնները, շեշտելով, որ ընտանիք-եկեղեցի-դպրոց եռանկիւնին իւրաքանչիւր կալուածը իր տեղը ունի մանուկին ու պատանիին կազմաւորման մէջ: Ան լուսարձակի տակ առաւ Նոր սերունդներու ուղիղ դաստիարակութեան մէջ հոգեւորականներու, ծնողներու, դաստիարակներու եւ ազգային պատասխանատուներու իւրայատուկ բաժինները:

Երեկոն վերջ գտաւ Առաջնորդ Սրբազանին «Պահպանիչ»ով:

“YEAR OF CHRISTIAN EDUCATION” LECTURE

The third lecture in the “Year of Christian Education” series took place under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, on the evening of Tuesday, September 23rd, at St. Mary’s Church in Glendale. The lecture was the first of a three part series titled “Christian Education in Family, School, Social, and Community Life”, and was presented by Christian Education Department Co-Director Very Rev. Fr. Muron Aznikian. The second and third lectures in this series will take place on October 1st and October 8th respectively.



Following the opening prayer by the Prelate and clergy members, Master of Ceremonies Mrs. Tamar Tufenkian-Seraydarian welcomed the guests and reflected on the message of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia in declaring 2008 to be the “Year of Christian Education”, emphasizing that the Armenian Church, school, and family are all vital to the proper development of

our youth. Mrs. Seraydarian then invited Fr. Muron to present his lecture.

Fr. Muron began his lecture by speaking on the bases that comprise the overall mission of the Church, with Christian Education as the heart of that mission. Referencing Biblical passages and the message of His Holiness, Fr. Muron went on to speak of the different stages in the development and rearing of children, and of the great responsibility of parents, and especially of mothers, to provide the right instruction starting at a very young age. Stressing that spiritual nourishment is just as vital as physical growth and nourishment, Fr. Muron presented a number of prayers that can be recited at different times of the day and in different circumstances to assist parents in the religious instruction of their children. He concluded by reminding the faithful that the first true Christian family was the earthly parents of Jesus Christ, Joseph and Mary, calling on each and every Christian family to hold as their ideal the family of Jesus Christ.

The program also included an artistic portion in which high school students from Rose and Alex Pilibos School participated with songs and recitations.

In his closing remarks the Prelate first commended Fr. Muron, Mrs. Seraydarian, and the students for their participation. The Prelate emphasized the value of Christian Education and of living a Christian-based life, which entails that one be God-fearing and follow in the path of righteousness by living in accordance with the commandments set forth by Jesus Christ. The Prelate then spoke of the family-church-school connection, while stressing the individual role of each, and concluded by noting the unique contributions of our clergy, parents, educators, and community leaders in the instruction of our youth with our Christian and Armenian values and traditions, and the importance of mutual cooperation among all three towards this purpose.

The program came to a close with the benediction by the Prelate, which was followed by a reception in the hall by the Board of Trustees and Ladies Auxiliary.